555

[illegible]
175

91.542-2
Ք-17

ԲԱՐՍԵՂ ՔԱՄԱԼԵԱՆ

# ՍԻՐԱՀԱՐԸ ՍԵՂԱՆԻ ՏԱԿ

ՎՈԴԵՒԻԼ ՄԷԿ ԱՐԱՐՈՒԱԾՈՎ

Թ Ի Փ Լ Ի Ս
Տպարան Յովհաննէս Մարտիրոսեանցի
1893

№ 712
891.542-2
Ք-17

ԲԱՐՍԵՂ ՔԱՄՍԼԵԱՆ

# ՍԻՐԱՀԱՐԸ ՍԵՂԱՆԻ ՏԱԿ

ՎՕԴԵՒԻԼ ՄԷԿ ԱՐԱՐՈՒԱԾՈՎ

РЕДАКЦІЯ ... ТИФЛИСЪ

ԹԻՖԼԻՍ
Տպարան Յովհաննէս Մարտիրոսեանցի
Тиф. тип. И. Матросіянца. Орб. ул. № 1—2.
1893

4437

Дозволено Цензурою, Тифлисъ, 9-то ноября 1393 г.

ԻՒՐ ՀԱՆԳՈՒՑԵԱԼ ՀՕՐԸ՛

ՄԱՐԳԱՐ ՍԱՐԳՍԵԱՆ

ՔԱՄԱԼԵԱՆԻ

ԱՆՄՈՌԱՆԱԼԻ ՅԻՇԱՏԱԿԻՆ

Նուիրում է

ՀԵՂԻՆԱԿԸ.

**1892**

# ՀԱՅԿԱԿԱՆ ԹԱՏՐՈՆ

Հինգշաբթի 17-ին Դեկտեմբերի,

Հայ դերասանական մշտական խումբը Արքունական Թատրոնում՝ ներկայացրեց առաջին անգամ՝

# ՍԱՄԷԼ

Ողբերգութիւն

ԵՒ

## ՍԻՐԱՀԱՐԸ ՍԵՂԱՆԻ ՏԱԿ

Վօդևիլ մէկ արարուածով, հեղ. Բ. ՔԱՄԱԼԵԱՆԻ

**ԳՈՐԾՈՂ ԱՆՁԻՆՔ.**

ԲԱՂԴԱՍԱՐ ԲԱՂԴԱՍԱՐՈՎ, վաճառական, Պ. ՏԷՐ-ԴԱՒԹԵԱՆ.
ԹԱԼԻԿՕ, սորա կինը. . . . ՕՐ. ՎԱՐԴՈՒՀԻ.
ՄԱՇՕ. սոցա աղջիկը . . . . Տ. ՄԵԼԻՔԵԱՆ.
ԳԷՈՐԳ ՊՕՂՈՍԵԱՆ, կիսաուսում երիտասարդ
և Մաշօի սիրահարը . . Պ. ՊԱՐՈՆ-ՍԱՐԳՍԵԱՆ

*Անցքը պատահում է Թիֆլիսում.*

175-2014
174

Տեսարանը ներկայացնում է միջին ճաշակով զարդարուած սենեակ։ Մէջտեղ մի մեծ կլոր սեղան, մինչեւ ոտերի ծայրերը սփռոցով ծածկած։ Աջ եւ մէջտեղ դռներ, իսկ ձախ կողմը մի պատուհան՝ որ նայում է դէպի փողոցը։

## ՏԵՍԻԼ ԱՌԱՋԻՆ

ՄԱՇՕ, Մէնակ նստած է պատուհանի առաջ և գործում է։

ՄԱՇՕ

Ա՜խ, ինչու ուշացաւ Գէորգս... Չ՚լինի թէ նա անցաւ և ինձ չ՚նկատեց։ Բայց ո՛չ, նա գիտէ որ ես իրան կ՚սպասեմ... երևի չէ անցել. ապա թէ ո՛չ, առանց ինձ տեսնելու չէր գնալ։ (Պատուհանի փեղկը բաց է անում և շատ շատ դուրս է նայում։) Ափսո՜ս, հազար ափսոս, ինչո՛ւ դուրս եկայ գիմնազիայից։ Գիմնազիայում եղած ժամանակս՝ ամեն օր տեսնում էի նրան։ Մեր տեսակցութեան նուիրական տեղն էր՝ Սօլօլակի մաւի դռան կողքի պատը՝ և մեզանից ով շուտ դուրս կը գար գիմնազիայից կ՚սպասէր այնտեղ։ Երկա՜ր, շատ երկար ժամանակ զբօսնում էինք միասին՝ մոռանալով ամեն բան. յետոյ նստում, պատմում էինք միմեանց նախընթաց օրուան կարօտութեան տանջանքը։ Նա, ժամանակ առ ժամանակ՝ մօտեցնելով իր քնքոյշ շրթունքները՝ մի այնպիսի հրճուանքով համբուրում էր, որ ինձ թվում էր՝ ինչպէս հրեշտակի համբոյր... Երբ իմացաւ իմ դուրս գալը, նա էլ թողեց գիմնազիան... Իսկ հիմայ, շարունակ փակուած եմ տանը և միակ մխիթարութիւնս դարձել է այս պատուհանը. բայց երևակայեցէք իմ դրութիւնը, որ մայրս այստեղ էլ խնայում է ինձ նստելու և միշտ կռվում է հետս... Ես կը մեռնեմ, եթէ մի օր չ՚տեսնեմ Գէորգիս։

## ՏԵՍԻԼ Բ

**ՄԱՇՕ և ԹԱԼԻԿՕ**

**ԹԱԼԻԿՕ**

Ուշքիս եկիր դուն քա, վուր էտ ակոշկեմէն չիս հիռանայ։

**ՄԱՇՕ**

Ի՞նչ ես ուզում մայրիկ, որ ես ակոշկումը նստեմ։

**ԹԱԼԻԿՕ**

Ի՞նչ իս ուզումը վուրնչէ, ինչ կարգ է մէ գլուխ ակոշկումը նստիլը։ Գիշիր-ցերեկ չիս հիռանում էտղանց, կօսիս միխած ըլիս։ Միղը է դուս գալիս էտղանց, թէ ինչ է։

**ՄԱՇՕ**

(Առանձին։) Մեղրիցն էլ քաղցր։ (Նրան։) Մայրիկ, բաւական չէ՞ որ շարունակ տանը փակուած, չորս պատի մէջ նստած եմ, դեռ խնայում ես թէ, պատուհանում ինչու ես նստում. ուրիշների պէս հօ ամեն գիշեր կլուբներ ու սեմէյնիյ վէչերներ չեմ ման գալիս. չեմ հասկանում ձեր բնաւորութիւնը, ուզում էք կենդանի թաղել ինձ։ Միթէ ամօթ բան է, որ մարդ իր տան պատուհանում նստի։

**ԹԱԼԻԿՕ**

Ամութ կ... վուրթի, խալխ ին անց ու դարձ անում, դուն էլ մարթու տալու ախչիկ իս. կու տեսնին վուր, մէ գլուխ ակոշկումն իս նստած՝ ու կու խօսին։ Չիս գիդի միր քախկի ադաթը՞... խօմ գիդիս վուր չիս էտ ասա-կօսէքը չիմ սիրի։

**ՄԱՇՕ**

Խալխի աչքն էլ տռաքուի ու նրանց ադաթինն էլ։ Գիմնազիայումն էլ դրուստ նրանց ադաթներն են սովորացնում, тоже!... ուրեմն՝ հաց էլ չ'ուտեմ, որ այդ քո ասած խալխը վրաս չ'խօսի... Երանի քեզ մայրիկ, որ այդպիսի յիմար բաների վրայ ուշադրութիւն ես դարձնում։ Ամեն մարդ թո՛ղ իր վրայ խօսի, իր պակասութիւններն ուղղի, ուրիշին բամբասելը նրան չի հարստացնի։

**ԹԱԼԻԿՕ**

Էտ խօ էտէնց է վուրթի, դրուստ իս ասում, ամա մայինց անմիդ տիղը ինչի խօսեցնիմ խալխին։



**ՄԱՇՕ**

Ախար ինչիս վրայ պէտք է խօսեն. կասեն թէ՝ Մաշօն իրանց ակոշկումն է նստում. թո՛ղ ասեն։

**ԹԱԼԻԿՕ**

Չիմ ուզում վուր ասին է... Հիմի չիս ուզում իմ մէ քարվասլէն գնայ, կրուժովէք առնելու... գնամ հալա շուրիրս փոխիմ... կոխպէ էտ ակոշկէն։

**ՄԱՇՕ**

Լաւ։ Միտկալը չմո՛ս մոռանալ մայրիկ, բալիշների և հայրիկի շապկացուի համար։

**ԹԱԼԻԿՕ**

Լաւ միտս բերիր, չլիս մտեմէս ննգիլ էր. էտու համա էլ ծածկած բազազխանէն պիտի գնամ, Սիօնի թաղումը։ (Նայելով պատուհանին։) Կոխպէ՛ էտ ակոշկէն...

**ՄԱՇՕ**

Լաւ։ Գնա, գնա շուտով մայրիկ, ապա թէ ոչ հայրիկը կը բարկանայ եթէ այսօր էլ թողնես։

**ԹԱԼԻԿՕ**

Քա, ինչ իս ասում, էսօր թողնիլը վունց կուլի հորէս գնում իմ։ Էսօր պիտի ձևինք, ու կարիլը էքուցը կըսկսինք։ Հալա գրամ մէ շուրիրս փոխիմ... (Նայում է պատուհանին որ դեռ բաց է։) Քա, կոխպէ էտ ակոշկէն. քանի՞ պիտի ասիմ... (Մաշոն երեսը նայելով չէպող մօրը, ուժեղ հարուածելով փակում է։)

**ՄԱՇՕ**

Ըհը՜... գնջացիր,..

**ԹԱԼԻԿՕ**

Թո՛ւ... քու էլած սհաթին նալաթ... (Բարկացած դուրս է գնում։)

## ՏԵՍԻԼ Գ

**ՄԱՇՕ, Մէնակ։**

**ՄԱՇՕ**

(Կարճ լռութիւնից յետոյ.) Տէր Աստուած, այս րոպէիս ինչ ուրախութիւն պատեց ինձ. ինչպիսի բերկրութեամբ լցուեց ամբողջ

սիրտս ու հոգիս. մայրս կերթայ, ուրեմն՝ ես մէնակ կը մնամ տանը, ո՜հ... (Բաց է անում պատուհանը և դուրս է նայում։) Ա՜խ, ո՞ւր է թէ հիմա անցնէ իմ հրեշտակը-Գէորգը, ի՜նչ երջանիկ ժամանակ կ՚անցկացնենք միասին՝ մինչև մօրս վերադարձը. իսկ մայրս, խօսք չ՚կայ որ բաւականի կ՚ուշանայ։ (Կրկին նայում է դուրս.) Ա՜հ .. ա՜հ..։ ահա և նա, նա գալիս է, նրա դէմքն է փայլում հեռուից.․. տես, տե՛ս, ինչպէս նա ինձ նկատեց, տեսէք, նա ինձ գլուխ է տալիս, բարևում է... (Ինքն էլ է ձեռքով տալիս և չեռքով ջանում։) Արի, արի շուտով։ Տեսէք ինչպէս արագացրեց քայլերը... (Կարճ լռութիւն։) Եկա՞ւ։ Գէորգ ջան, ինչո՞ւ այդքան ուշացար, քանի ժամանակ է սպասում եմ քեզ պատուհանում։

ԳԷՈՐԳ

(Դրսից։) Ի՞նչ անեմ, իմ հրեշտակ, խմբագրատանը սրբագրութիւն շատ ունէի, չէր կարելի թողնել և ուշացայ։ Ներիր։ Մինչև անգամ առանց ճաշելու ուղղակի այս կողմը վազեցի, գիտէի որ կը սպասես։

ՄԱՇՕ

Աչքերս ջուր կտրուեց Գէորգ ջան, շատ սպասելուց,

ԳԷՈՐԳ

(Դրսից։) Գէորգը չարդ տանի Մաշա ջան, մայրդ տանը չէ՞, որ այդպէս ազատ ու համարձակ խօսում ես։

ՄԱՇՕ

Տանն է, բայց համարեա թէ տանը չէ։ Նա միւս սենեակումն է, պատրաստվում է և շուտով պէտք է գնայ։

ԳԷՈՐԳ

(Դրսից։) Ո՞ւր, հոգիս։

ՄԱՇՕ

Ուրիշ տեղ։

ԳԷՈՐԳ

(Դրսից։) Ուրիշ տե՞ղ։

ՄԱՇՕ

Այո՛։

ԳԷՈՐԳ

(Դրսից։) Ուրեմն դու մէնակ ես մնալու։



ՄԱՇՕ

Բոլորովին մէնակ։ Մի քիչ ժամանակից յետոյ դու անցիր և ես քեզ ներս կը բերեմ այստեղ։ Կամ թէ չէ, աւելի լաւ է, դու միւս փողոցում թագնուիր և երբ տեսնես որ, մայրս դուրս գնաց. դու իսկոյն վազիր ինձ մօտ։ Ես քեզ դրանը կը սպասեմ։

ԳԷՈՐԳ

Շատ լաւ, իմ հրեշտակ, շատ լաւ։ Եւ մենք տանը կը լինինք միմիայն երկուսով, այնպէս չէ՞։

ՄԱՇՕ

Այո՛, այո՛։

ԳԷՈՐԳ

Ո՜հ, ես չեմ ուզում հաւատալ, Մաշա ջան։

ՄԱՇՕ

Եւ ինչ կայ չ՚հաւատալու. աղաչում եմ կատարիր ինչպէս ասում եմ քեզ։ Կարծեմ մայրս էլ գալիս է, գնա՛ և չ՚ուշանաս։

ԳԷՈՐԳ

Շատ լա՛ւ, շատ լաւ իմ հրեշտակ։ (Մտնում է Թալիկոն հագնուած ու զուգուած, ձեռքին հովանոց և ձեռնոցներ հագնելով։)

*ՏԵՍԻԼ Դ.*

ՄԱՇՕ և ԹԱԼԻԿՕ

ԹԱԼԻԿՕ

Աբա, ցխս գնում իմ, Մաշօ, տանը լաւ մուղայիթ կաց... (Նայելով պատուհանին։) Քա՛, էլի բաց իս արի էտ ՝ակոշկէ՞ն, կոխպէ էս սհաթ ին։

ՄԱՇՕ

(Կոտրատուելով։) Մայրիկ, դու ինձ կատարելապէս թօ քախտ կը գցես։

ԹԱԼԻԿՕ

Քիզ ասում իմ կոխպէ էս նմուտխ թէ չէ, Աստուծ գիդենայ չիմ գիտի թէ...

ՄԱՇՕ

(Կրծքից հառաչելով։) Ա՜հ... ահա՛, էս էլ կոխպեցի։

ԹԱԼԻԿՕ

Քուչի դռներն էլ ղայիմ կողպէ ու տանը նստի։

ՄԱՇՕ

Ղայիմն էլ ո՞րն է, ինչպէս ամեն օր կողպում ենք, այնպէս էլ հիմա կը կողպեմ, ապա թէ ոչ, ես հօ դարբին չեմ որ երկաթներով ամրացնեմ։

ԹԱԼԻԿՕ

Քիզ հիդ խօ խօսիլ չի ըլի՜ու... մէ խօսկին թէ հազար ջուղաբ չ'տվիր չի ըլի։ Էս հիմիկուայ ախչկիրքը՚, օ՜հ, օ՜հ, օ՞հ, օ՜...

ՄԱՇՕ

(Ծիծաղելով։) Սխար ասում ես ղայիմ կողպիր, ապա ինչ պատասխանեմ...

ԹԱԼԻԿՕ

Լաւ է, լա՜ւ, լպստած։ Չի.քիլէս դրսէ արի։

ՄԱՇՕ

(Ոգևորվելով։) Շատ կողտա ես մայրիկ ջան, գնա՛ շուտով։ Բայց տե՛ս, կամաց կամաց ման արի, ապա թէ ո՛չ, դու սրտի թուլութ գիտես։ Չթի համար էլ ծանկած բազազխանէն գնա, թէ չէ քարվասլինը փթած է լինում

ԹԱԼԻԿՕ

Հիմի դուն ինձ իս սովրեցնում։ (Գնալով) Արի դուռը կողպէ։ Ակոշկէն չ'բաց անիս թէ չէ,էլ իմ ձեռնեմէն չիս պրծնի։ (Գնում է։)

*ՏԵՍԻԼ Ե.*

ՄԱՇՕ, (Մտնում է քիչ ժամանակից յետոյ։)

ՄԱՇՕ

(Երգելով.) Տրա լա... լա... տրա լա... լա... տրա... լա... լա... լա.. Տէր Աստուա՛ծ, որքա՜ն ուրախ եմ այժմ... Ո՛հ, օրհորդների և սիրոյ աստուած, դու ողորմի՛ր ինձ՝ և իմ դրութեան մէջ գտնուող բոլոր օրիորդներին, դու արժանացրու մեզ, մեր նպատակին... (Բաց է անում պատուհանը և դուրս նայում։) Ա՛խ, երանի թէ չ'ուշանայ... (Կրկին նայում է դուրս։) Ահա և նա գալիս է։ Արի, արի Գէորգ ջան, մայրս գնաց։



ԳԷՈՐԳ

(Դրսից։) Գիտեմ որ գնաց։ Դռները բա՞ց են։

ՄԱՇՕ

Բաց է հոգիս։ Ուրախութիւնից սիրտս թռթռում է։ Գնամ ներս բերեմ։ (Դուրս է վազում։)

*ՏԵՍԻԼ Զ.*

ՄԱՇՕ և ԳԷՈՐԳ։ (Մտնում են պօդրուչկով)

ԳԷՈՐԳ

Մայրդ ո՞ւր գնաց Մաշա ջան։

ՄԱՇՕ

Անհոգ եղի՛ր, նա շուտ չի վերադառնայ։

ԳԷՈՐԳ

Իսկ դռները փակեցի՞ր...

ՄԱՇՕ

Ի հարկէ։ Այժմ մենք մէնակ ենք և այն ուրախ րոպէներն ու սէրը պէտք է վայելենք, որից ճաշակել ենք մի տարի առաջ...

ԳԷՈՐԳ

Ուրեմն դու չես մոռացել այն բաղդաւոր անցեալը Մաշաջան...

ՄԱՇՕ

Ո՛հ, ինչպէս կարող եմ մոռանալ... Ափսո՜ս, ինչո՞ւ թողեցինք գիմնազիան։

ԳԷՈՐԳ

Ես էլ շատ եմ ափսոսում, Մաշա ջան, բայց արդէն ուշ է... Հա, մոռացայ ուրախացնել քեզ, Մաշա ջան..

ՄԱՇՕ

(Ընդմիջելով.) Ի՞նչ, ինչ...

ԳԷՈՐԳ

Շնորհաւորի՛ր ինձ, ես արդէն ստացայ աստիճան և նշանակեցին ռոճիկ։

ՄԱՇՕ

Դու ճշմարիտ ե՛ս ասում, Ժօրժիկ ջան, հա՞, դու չես խաբում, հա՜..

ԳԷՈՐԳ

Մինթէ քեզ կը խափեմ, Մաշա ջան։ Այսօր ֆորման *) էլ զակազ տուեցի։ Բայց ինչ գեղեցիկ ֆորմայ պէտք է հագնեմ և ինչ փայլուն էպօլէտներ ունենամ այստեղ… (Ցոյց տալով ուսերը։)

ՄԱՇԱ

Շնորհաւորում եմ հոգիս, բայց ռոճիկը որքան է։

ԳԷՈՐԳ

Յիսուն ռուբլի, սկզբում. խմբագրատնից էլ 40 ռուբլի, այդ քեզ 90 ռուբլի։ Տեսնում ես, Մաշա ջան, որ մենք այժմ հասած ենք մեր նպատակին։ Այժմ իմ միակ պակասութիւնը դու ես. եթէ մենք սիրենք միմեանց անկեղծ սիրով, ամեն տեսակ խոչընդոտների կարող ենք յաղթել։ Այն ժամանակ տես թէ ինչպէս ենք ապրում։ Դու ինձ համար կը լինես ոչ թէ ամուսին՝ այլ մի կուրք, մի սուրբ պատկեր։

ՄԱՇԱ

Եւ դու կասկածում ես իմ սիրոյ վերաբերմամբ։

ԳԷՈՐԳ

Չեմ կասկածում, բայց ասում եմ, որ գլխաւորապէս քեզանից է կախուած, գիտես որ ինձ համար ոչինչ դժուարութիւն չկայ։

ՄԱՇԱ

Բայց ես ինչ կարող եմ անել, Գէորգ ջան, ես մի թոյլ արարած, որ շարունակ փակուած եմ տանը։ Ասա տեսնեմ, ինչ կարող եմ անել և չեմ անում։

ԳԷՈՐԳ

Որոշել մի տեղ տեսնուելու։

ՄԱՇԱ

Ես ինչպէս կարող եմ որոշել տեղ, քանի որ մայրս մի քայլ անգամ անել չէ թողնում առանց իրան։

ԳԷՈՐԳ

Եթէ դու ինձ լսես, շատ լաւ կը լինի, բայց որ չես ուզում ինչ անեմ։

---

*) Ծանօթ. համազգեստ։



ՄԱՇԱ

Ի՞նչ… փախչենք, Գէորգ… ո՛չ, սիրելիս, այդ անկարելի է։ Ես քեզ սիրում եմ, կարող եմ… պատրաստ եմ նաև զոհուել քեզ համար… բայց չեմ թոյլ տայ ինձ գիմել մի այդպիսի ստոր միջոցի. ես չեմ ուզում բամբասանքի առարկայ դառնալ…

ԳԷՈՐԳ

Սկզբում կը բամբասեն, բայց երբ կը տեսնեն մեզ պսակուած, կը լռեն։

ՄԱՇԱ

Թէև պսակուածներ կը լինենք, այնուամենայնիւ, փողոցով անցնելու ժամանակ, բոլորը մեզ վրայ մի կողմնակի աչքով պէտք է նայեն ու ասեն՝ ահա այն ամուսինները, որոնք փախան իրանց ծնողներից և այլն, և այլն, հազար ու մի պոչեր կպցնեն ու առասպելի նման ամեն տեղ մեզ պատմեն։ Ո՛չ սիրելիս, իմ ամբիծխղճը այդ չի կարող տանել, եթէ կարող ես մի ուրիշ միջոց գտիր։

ԳԷՈՐԳ

Շատ եմ մտածում, բայց… (Մտածում է։)

ՄԱՇԱ

Ես ինքս էլ մտածում եմ…

ԳԷՈՐԳ

(Յանկարծ ընդմիջելով) Մաշա ջան, գտա միջոց…

ՄԱՇԱ

(Ուրախ։) Ի՞նչ…

ԳԷՈՐԳ

(Հպարտ։) Չէ՞ որ ես արդէն աստիճանաւոր եմ, էլ ինչ հարկաւոր է գլուխ տռաքացնել։ Ես անձամբ կը ներկայանամ ծնողներիդ և ուղղակի կ'առաջարկեմ քո մասին՝ խնդրելով քո ձեռքը. սորանից էլ լաւ միջո՞ց… կ'ասեմ ուղղակի, որ մենք սիրում ենք միմեանց։

ՄԱՇԱ

Ա՜յ, այդ գովելի միտք է։ Այն ժամանակ ես էլ կը յայտնեմ իմ համաձայնութիւնս, կը խնդրեմ ծնողներիս և մենք կը հասնենք մեր նպատակին։

ԳԷՈՐԳ

Այդ բոլորը լաւ, բայց եթէ յանկարծ մայրդ վրայ հասնէ, ինչ պէտք անենք:

ՄԱՇՕ

Անհոգ եղիր հոգիս, նա ուշ կը վերադառնայ, կանանց ման գալը հօ գիտես, սազեր են կատարեալ:

ԳԷՈՐԳ

Իսկ օրիորդները...

ՄԱՇՕ

Օրիորդները...

ԳԷՈՐԳ

Աղաւնիներ, այնպէս չէ...

ՄԱՇՕ

Իսկ և իսկ: (Ծիծաղում են:)

ԳԷՈՐԳ

Ժամանակը այնպէս կանցնի, որ մենք նկատել չենք կարող, պէտք է զգոյշ լինել...

ՄԱՇՕ

Եթէ ես չեմ վախենում, դու ինչո՞ւ ես վախենում:

ԳԷՈՐԳ

Քո պատճառով, որովհետև քեզ կը նախատեն, կը վիրաւորեն... Յիշում ես անցեալ անգամն էլ դրանը որ խօսում էինք, նկատել էին՝ և միւս օրը դու ինքդ ասացիր որ բարկացել են քեզ վրայ:

ՄԱՇՕ

Ոչինչ, հոգիս, մայրերի բարկութիւնը րոպէական է. Մայրս ինձ պատուհանում նստելն էլ է արգելում, բայց... ես իմ կամքն եմ կատարում, քեզ տեսնելու նպատակով,

ԳԷՈՐԳ

Ա՜խ, Մաշա ջան, երբ պէտք է պսակուենք որ վերջ լինի այսքան չարչարանքներին և ահ ու դողով տեսնուելուն:

ՄԱՇՕ

Ես էլ հէնց այդ օրին եմ սպասում, Գէորգ ջան:

ԳԷՈՐԳ

Մի փոքր էլ պէտք է համբերենք աղաւնիս, և մենք շուտով, այո, շատ շուտով կը հասնենք մեր ցանկալի րոպէին... (Այս խօսակցութեան ընթացքում փաթաթւում են և համբուրւում: Լսւում է ուժեղ դռնբախութիւն. երկուսն շփոթւած հեռանում են միմեանցից:) Մաշա ջան հիմա ինչ անենք... ուր գնամ ես, պատուհանից թռչեմ... բայց եկողը կը տեսնէ...



С.С.Р.А. Публичная библиотека 7/XI 1922 имени А. Мясникяна ... ՄՅԱՍ. Ի ՅԱՆԻ ԱՆՎԱՆ

ՄԱՇՕ

(Նոյնպէս շփոթւած:) Տէր Աստուած, այս ով պէտք է լինի: Պատուհանից թռչելն ինչպէս կարելի է, հոգիս, գիտեմ որ մայրս չի լինի, նա այսպէս շուտ չէր կարող գալ: Երևի ուրիշ մարդ կըլինի: Բայց սպասիր նայեմ պատուհանից. տեսնեմ ով է: (Դուրս է նայում պատուհանից և յանկարծ աղաղակում:) Ա՜հ... հայրս է... Գէորգ ջան...

ԳԷՈՐԳ

(Սաստիկ շփոթւած:) Ա՜յ... հայրդ...

ՄԱՇՕ

Տէր Աստուած, նա ամենևին սովորութիւն չունի այս ժամանակ տուն գալու, բայց երևի գործ կունենայ և շուտով կերթայ էլի:

ԳԷՈՐԳ

Ի՞նչ անեմ, ուր գնամ...

ՄԱՇՕ

Գէորգ ջան, մինչև հօրս գնալը, արի այս սեղանի տակ թաղնուիր, ապա թէ ոչ, ուրիշ հնար չկայ: (Ծեծում են դուռը:)

ԳԷՈՐԳ

Այո, ուրիշ հնար չկայ, պէտք այդպէս անեմ: (Մտնում է սեղանի տակ:)

ՄԱՇՕ

Ես գնամ դուռը բաց անեմ: (Դուրս է գնում:)

(Մի քանի վայրկեան բեմը դատարկ է մնում:)

*ՏԵՍԻԼ Է.*

ԲԱՂԴԱՍԱՐ, ՄԱՇՕ և ԳԷՈՐԳ, (վերջինը սեղանի տակ:)

БԱՂԴԱՍԱՐ

Ոխչի՜… էսքան վուր թխթխկեցնում էի չէիր իմանում։

ՄԱՇՕ

Չեմ իմացել հայրիկ, ես միւս սենեակում նստած գործում էի՛

ԲԱՂԴԱՍԱՐ

Վա՜… դռնիրը կի տակռահան արի ու…

ՄԱՇՕ

Չեմ իմացել հայրիկ, ինչ անեմ։ (Բաղդասարը գնում է մինչև միւս սենեակը, ներս է նայում և չէր գտնում. նա ժամ նրա վերադարձը Գէորգը հանում է գլուխը սեղանի տակից։)

ԳԷՈՐԳ

Մաշա ջան, ո՞ւր գնաց հայրդ։

ՄԱՇՕ

Ծածկուիր, ծածկուիր նա գալիս է։ (Գէորգը ծածկվում է։)

ԲԱՂԴԱՍԱՐ

Դէդէտ ո՞ւր է գնացի, հարցնիլը ամութ չլի։

ՄԱՇՕ

Քարվասլէն գնաց, հայրիկ։

ԲԱՂԴԱՍԱՐ

(Գլուխը շարժելով) Հը՜… քարվասլէն գնա՜ց… դրանց քարվասլա գնալը խօ էլ հախ ու հէսաբ չունէ։ Արմնելու բան է էս կնգդերանց բանը, հէնց մէ էրկու գրօշ կու ճարին թէ չէ, բիրդան քարվասլէն կու վազին… Ի՞նչ պիտի էլիէր կնգդերանց բանը ու նրանց հալը՝ վուր, Թամամշովը էն քարվասլէն չէր շինի։ (Հանում է չիբուխը ու ծխում։)

ԳԷՈՐԳ

(Գլուխը դուրս հանելով,) Տօ ուադ ըլէ էսպանց շուտով է… (Մաշան ծածուկ ծիծաղում է։)

ԲԱՂԴԱՍԱՐ

(Մաշային։) Իժում դուն մէնակ իս։

ՄԱՇՕ

Մէնակ եմ, ինչ անեմ, ինչ վնաս,

ԲԱՂԴԱՍԱՐ

Գնա՛ լաւ, բանդ շինէ։ (Մաշան էլի խորհում տատանվում է։)



Հը՜… ջհէլ ախչկան տանը մէնակ է թողնում ու ինքը գնում է։

ԳԷՈՐԳ

(Գլուխը հանելով) Չէ՛, սա գնալու միտք չունէ։

ԲԱՂԴԱՍԱՐ

Սբա ինչ խիլք ուզիմ չիս կնգդերանցմէն։ Աբա էտէնց ին փչացնում իրանց ախչկերանցն է… (Նստում է սեղանի առաջ։) Իմ ախչիկն էլ վուր ուրիշ ախչկերանց պէս էր էլի. ով գիդէ սիրեկնին տուն էր բերի ու հետը սազ ու բազ էր սարքի։ (Գէորգը հանում է գլուխը, ծիծաղում ու թաքնվում նորից։) Ամմ, Աստուա՛ծ վուչ անէ…

ԳԷՈՐԳ

(Սեղանի տակից։) Աչն ու խաչը։

ԲԱՂԴԱՍԱՐ

(Տատանվելով։) Իմ ախչիկը էնթավուր չէ…

ԳԷՈՐԳ

Դուն արխէյն կաց։

ԲԱՂԴԱՍԱՐ

Գանա քիչ է էլի էտթավուր բա՜ն… ամա, ո՞ւմ միղն է… չէ՞ վուր իր դէդի միղն է։ Ախչիկը, էն էլ հասած, մարթու տալու, իրան վուր մէնակ կու ճանդէ, ամեն բան կօնէ։ Աբա թէ լաւ ծնողնիր ին, էն չախը մուղայիթ կենան…

ԳԷՈՐԳ

(Սեղանի տակից։) Ինչպէս դուն։

ԲԱՂԴԱՍԱՐ

(Տատանվելով։) Օխտը գիղի պահիլը հիշտ է, քան մէ մարթու տալու ախչկանը… թէ՛ չէ… թէ մէ անումը վեր արա՜ւ… պրծա՜ւ…

ԳԷՈՐԳ

(Սեղանի տակից։) Աբա թէ՛ գնա։

ԲԱՂԴԱՍԱՐ

(Տատանվելով…) Էն ախչկայ ժամը դուս էկաւ։ (Կարճ լռությունից։) Չէ՛, վունց որ տեսնում իմ, Միխէյլ Պօղոսովը մտկումը բան ունէ… (Այդ ժամանակ Գէորգը գլուխը հանում է և զարմացմամբ լսում նրա խօսքերին։) Վուր էն օրը էնէնց խօսեցաւ հիդս։ Ցիս նրա միտկը

իմացայ, վուր իր տղի համա է ուզում ախչկաս։ Ինքն էլ գոված տղայ է, չին ունէ կօսէ, գազէթումը գուգիս նա է գրում կօսէ, ու ամսէնը...

ԳԷՈՐԳ

Տէր Աստուած, սա իմ մասին է խօսում...

ԲԱՂԴԱՍԱՐ

(Ծարաւանալով)... Տասը թէ, տասէրկու թուման փող է վի- կալնում կօսէ... Վա՜... դրա վրայ էլ լաւ բա՛ն... էրնէկ բանը գլուխ գա՛յ, կխսին էլ արժանի չիմ...

ԳԷՈՐԳ

Բանս լաւ է։

ԲԱՂԴԱՍԱՐ

(Աչքած նայում է շուրջը։) Միղայ քի տէր Աստուձ... էս ինչ ձէն իմ իմանում... (Քաշւում է մտախոհ։) Թէ էտ բանը ղուրթ գը- լուխ էկաւ, մէ խօսկով՝ ինխստ լաւ կուլի։

ԳԷՈՐԳ

Գլուխ է եկել ու պրծել։

ԲԱՂԴԱՍԱՐ

(Զարմացած վեր է թռչում։) Էլլի... (Նայում է շուրջը, յետոյ պատուհանի կողմը։) Էս ձէնը վուրդանց է... թէ՞, միր ակոշկի տակն ին խօ- սում։ (Մաշոն ծիծաղում է ծածուկ և հեռ՛ հայելուց սենեակի խորքը թաքնվում։) Էսօր մէ քիչ քէփս խարաբ է։ Իրիգուան ղաուրմէն սրտիս քաց- խիլ է, ուզում իմ մէ քիչ դնջանայ ու իրիգնապահը մէ էլի անց կենում դէնը, բլքամ տեհնիմ Միխէյլ Պօղոսովին։ Է՜, Մաշօ... (Մաշոն առաջ է գալիս։) Արի մէ լէհէբ ծածկէ վուրթի, պիտի պառ- կիմ, մէ քիչ դնջանամ։

ՄԱՇՕ

Հայրիկ ջան, ապա դուքան չե՞ս գնում, դու հիւանդ ես։

ԲԱՂԴԱՍԱՐ

Չէ, էնէնց, մէ սհաթ ուզում իմ քնի ու իժում կու զար- թեցնիս։ Գնա մէ մուլթաքա բի, էստիէվէտ մէ քիչ թինգը կու ննգնիմ...

ՄԱՇՕ

(Սարսափած։) Տէր Աստուած...



ԳԷՈՐԳ

Վա՜յ մէ, սա որ այստեղ շնթռլի, ես խօ կորայ...

ԲԱՂԴԱՍԱՐ

Փիէ... Նալլաթ քի չար սատանայ, էս ձէնը վուրդանց է գալիս, կուլի գլուխս վուր գըգրում է, նրամէն ըլի... ախչի, գնա մէ ջալդ մուլթաքայ բի, մէ քիչ գլուխս դնջացնիմ։

ՄԱՇՕ

Հայրիկ ջան, գնա միւս սենեակը, այնտեղ հանգիստ կ՚լինես։

ԲԱՂԴԱՍԱՐ

Էհ, մէկ էլ ով է գնում, տօ գնա՛ ասում իմ մէ մուլթաքայ ու լէհէբ բի։ (Պառկելով թախտի վրայ.) Այ էստի կու... տօ՛ ինչ իս կանգնի գնա՛ ասում իմ էլի...

ԳԷՈՐԳ

(Սեղանի տակից։) Քու դուշմանը հանաք չէ անում. պառկում է։

ՄԱՇՕ

Ախր հայրիկ ջան, այստեղ անհանգիստ կը լինես, այնտեղ լաւ է...

ԲԱՂԴԱՍԱՐ

Տօ էս կնգիրքը վուր էնէնց հուջաթ ին, քիզ ասում իմ գնա՛ բի էստի։

ԳԷՈՐԳ

(Սեղանի տակից։) Գնա բեր, տեսնում ես սատանի ձիու վրայ է նստել։

ԲԱՂԴԱՍԱՐ

Ի՞նչ ..

ՄԱՇՕ

Ոչինչ, գնում եմ։ (Գնում է։)

ԲԱՂԴԱՍԱՐ

(Յօրանջում է։) Ո՜ւ...ը... ու... տօ ինչ քունս տանում է... օ... ու...

ԳԷՈՐԳ

Ա՜յ զահրումար... ըհը՜...

ԲԱՂԴԱՍԱՐ

(Վեր է թռչում և նայում շուրջը։) Վա՜յ, տօ ո՞վ է էստի խօսում։

(Երեսը խաչակնքում է։) Մեղայ քի Տէր Աստուած... Մաշօ, Մաշօ, մէ ջալդ է, արի էստի... Նալլաթ քի չար սատանայ... (Դուրսէն նա-յելով շուրջը։ Մաշան բերում է բարձը ու վերմակը։)

ՄԱՇՕ

Հայրիկ ջան դիվանի վրայ մութաքայ չի դնում, բալիշ բերեցի։

ԲԱՂԴԱՍԱՐ

Դուն էլ էստի կաց Մաշօ, էստի ինչ որ ձէնիր իմ իմանում ու չիմ գլըխի գլուխս վուր փիս է էնդումէնէ թէ ինչ է, մէ քիչ քնիմ.., տեսնիմ... (Յօրանջում է։) Օ՜... ու... ու... (Պառկում է։) Ծածկէ մէ էտ լէհէբը... (Մաշան այնպէս է ծածկում որ երեսը չէ երևում։) _Տօ, մուլափ, գլխս խիխտեցիր... (Յօրանջում է։) Օ՜... ու... ու...

ԳԷՈՐԳ

Աստուծոյ կրակ... Ա՜յ ձեզ օյի՜ն։

ՄԱՇԱ

Հայրիկ ջան լաւ ծածկէ, չ՛մրսես։ (Քիչ ժամանակից յետոյ Բաղ-դասարը խռմփում է։)

ԳԷՈՐԳ

(Սեղանի տակից գլուխը հանելով։) Քնե՞ց, հա, քնե՞ց։

ՄԱՇԱ

Սո՜ւ... սպասի՛ր մի քիչ։

ԳԷՈՐԳ

Ապա փորձիր և մի րոպէ դու մտի՛ր այստեղ և այն էլ այս-պէս կծկուած դրութեան մէջ։ (Բաղդասարը խռմփում է աւելի բարձր։)

ՄԱՇԱ

Քնեց, հիմա կամաց դուրս արի։

ԳԷՈՐԳ

Քնե՞ց, փառք Աստուծոյ։ (Դուրս է գալիս սեղանի տակից։) Վա՜յ, ինչպէս է խռմփում, մէ լաւ դհօլ էլ սազ կը գայ... (Սկսում է սեղանի վրայ ածել դհօլի եղանակ։)

ՄԱՇԱ

Վա՜յ, ինչ ես անում Գէորգ, բաւական է, յանկարծ որ զարթնի լեղին կը պատռի։

ԳԷՈՐԳ

(Մօտենալով Բաղդասարին, ծածկում է երեսը։) Ապա հիմա էլ զար-



թնի։ Ինչ ծիծաղ բան էր Մաշա ջան, լսեցի՞ր հօրդ խօսքերը։ Նրա խօսքը իմ մասին էր. ապա հիմա ուրախացի՛ր, այժմ մենք կատարելապէս միմեանց ենք պատկանում։

ՄԱՇԱ

Ես այստեղ, սենեակի խորքում կանգնած լսում էի նրա ա-սածները... Խեղճ հա՛յր, որքան միամիտ է։ Նա չի էլ կարող երևակայել որ ես... Նստենք հոգիս, նա քնեց։

ԳԷՈՐԳ

Բայց մեր խօսակցութիւնը կարող է զարթացնել, Մաշա ջան, ժամանակ է որ ես գնամ, գուցէ շուտով մայրդ էլ գայ։

ՄԱՇԱ

Ո՛չ, Գէորգ ջան, նա դեռ շատ կ՚ուշանայ, նստի՛ր. ես քեզ չեմ թողնի։

ԳԷՈՐԳ

Մաշա ջան, կեանքումս սեղանի տակ չէի մտել, այդ էլ փորձեցի. սարդերի հետ խաղում էի. որքան սարդեր են եղել ձեր սեղանի անկիւններում, բոլորի հետ ծանօթացայ։ (Մաշան ծի-ծաղում է։) Քո պատճառով ինչեր չեմ անի, Մաշա ջան... (Ուզում է համբուրել. նոյն վայրկեանին սաստիկ բախում են դուռները, որոնք շփոթուած վեր են թռչում։) Թո՜ւ... անիծուէք, այս ինչ կը նշանակէ...

ՄԱՇԱ

Տէր Աստուած, այս ինչ պատիժ է, մի րոպէ չեն թողնում հանգիստ... (Նայում է դուրս պատուհանից։) Ա՜հ... մայրս... Գէորգ ջա՛ն մայրս,.. ա՜հ,.. ա՜հ... (Երկուսն էլ այս այն կողմն են վազում։)

ԳԷՈՐԳ

(Շփոթուած) Մա՛յրդ... մա՛յրդ... ա՛խ Մաշա, եթէ թողնէիր ես արդէն գնացած կը լինէի։ Քանի անգամ ասացի, որ մայրդ կը գայ, թող գնամ. հիմա ինչ անեմ... Նորից սեղանի տա՛կ մըտ-նեմ, բայց մինչև ե՞րբ... այս անգամ կուտեն ինձ սեղանի սար-դերը։

ՄԱՇԱ

Ուրիշ ելք չկայ աղաւնիս, սեղանի տակ, սեղանի տակ մտիր...

ԳԷՈՐԳ

Ա՞յ սեղանի տակ .քեզ ու ծիծու...

ՄԱՇՕ

Ծածկուէ՛ր շուտով մինչև մայրս կերթայ միւս սենեակը... (Դուռները ծեծում են դրսից։) Ես դուռը բաց կը թողնեմ և դու խսկոյն դուրս կերթաս, ուրեմն ծածկուէ՛ր շուտով, որ չը նկատէ։ (Դուրս է գնում։)

ԳԷՈՐԳ

Տէր Աստուած, այս ի՜նչ ձախորդութիւն է։ (Մտնում է սեղանի տակ։)

*ՏԵՍԻԼ Թ*

ԹԱԼԻԿՕ, (Մտնում է չարչու փաթեթներով,) յետոյ ՄԱՇՕ

ԹԱԼԻԿՕ

(Հոգնած ու փաթեթները դնելով սեղանի վրայ ) Ո՜ւֆ... ինչ դաթրեցայ .քա՜... (Նստում է սեղանի մօտ։) Ինչ անիմ, ի՜նչ էիր շինում, վուր չուրս-հինգ ջէր թխթխկեցրի, կոտրտեցի լամիս դռնիրը, աշխարւքը իմացաւ ձէնը՝ ու դուն կի ձլիւ դուս էկար։

ՄԱՇՕ

Միւս սենեակումն էի մայրիկ, լեհէբ էի պտրում հայրիկին ծածկելու։

ԹԱԼԻԿՕ

Քա՛, նա գանա տանն է։

ՄԱՇՕ

Այո՛, այս րոպէիս եկաւ, պառկեց և ասաց որ մէկ ժամից յետոյ զարթացնեմ։

ԹԱԼԻԿՕ

Ի՞նչի, հիւանդ է՞։

ՄԱՇՕ

Չէ, բայց այդպէս ուզեց։ Ապա ի՜նչ առար մայրիկ, ինչ շուտ եկար, գնա՛, գնա՛ դեռ շորերդ փոխիր։

ԹԱԼԻԿՕ

Էլ ինչ չուստ է։



ՄԱՇՕ

Բազազխանէն չը գնացի՞ր։

ԹԱԼԻԿՕ

Բազազխանա ցաւի գան ու Անծու պատժի, բա չը գնացի՜...

ՄԱՇՕ

Ի՞նչ է պատահել, մայրիկ...

ԹԱԼԻԿՕ

Էլ ի՜նչ պիտի ըլի, էնէ վուր...

ՄԱՇՕ

(Խօսքը կտրելով։) Դեռ գնա՛ մայրիկ ջան՝ շորերդ փոխիր ու յետոյ արի պատմի՛ր։

ԹԱԼԻԿՕ

Մուլափ .քա մէ գնջանամ. էնէ վուր, էնդի աթմորթին չի կանայ անցկենայ... Քուչացածնիրը դրուստ .քախցած գլխաներու պէս վրայ ին թափում խալխին ու լամիս շուրիրը վրէն պատրտին, հա՛յ մօբձանդի, ու հա՛յ մօբձանդի... Մէնակ խօսկով էլ խոմ չին դամբուլ կենում, կռնեմէն բռնում ին ու դէս ու դէն ին .քաշում աթմորթուն։ Քա գեդինը մտածնիր, թէ գուզիմ, չիս ինքս գուքամ ու կու առնիմ, թէ չէ, ի՜նչ պատիժ է վուր խալխին էտէնց չ'բեզրեցնի.ք։

ՄԱՇՕ

Մայրիկ ջան, գնա՛ շորերդ փոխի՛ր։

ԳԷՈՐԳ

(Սեղանի տակից,) Ձունչս կտրվում է։

ԹԱԼԻԿՕ

Օ՜հ, մախլաս, էտ բազազխանէն՝ ու մէկ էլ փարվասլէն՝ մէ խօսկով, անցկենալ չի ըլի... Ինչ լպստած, ի՜նչ թոկէն փախած ասխս դիփ էնդի ին։ Իլայիմ թէ ճանգում ին խոմ օքմնու, ո՜հ, ո՜հ, հո՜... Աստուծ թափէ ու Տէրն ազատէ... ջլխս ղէնօ ին շինում էլի։ (Այս միջոցին Մաշօն շփոթուած է տանջուած արցունքներով։) Մէ նրանց խազէյիննիրն էլ աչկով տեսնում ին՝ ու մէ .քի՜չ չին զսպում, կօսխս իրանց խրատած ըլի։ Չէ, դիփ նրանց միղն է, թէ չէ, վունց կանան էտունք անի։ Քա՛, ամութ չէ՞, ա՜յիբ չէ... ահ ու ամութը ջլխս կտրած ունին։ Օխտը անպէտկ վուրթի վուր ունե-

նամ, մէկին էնդի չիմ տայ, վուր գիդենամ թէ՝ ամսէնը քսան թուման տոնլուղ կուտան։

ՄԱՇՕ

Մայրիկ, գնա շորերդ փոխիր, ինչու ես այդպէս նստել. առածներդ լաւ են։

ԹԱԼԻԿՕ

(Վեր կենալով։) Հա՛, գնամ շուրիրս փոխիմ... Ամա ինչ չիթիմ առի էր... դրուստ ջէջիմ է էլի, արշինը չիրեք շայի մէ կապէկով։ (Գնում է միւս սենեակը։)

ԳԷՈՐԳ

(Սեղանի տակից ծրարը հանելով։) Գնաց... Փառք Աստուծոյ։ (Դուռը է գալիս։) Մաշա ջան էլ սպասելու ժամանակ չէ, դուռը բաց է։

ՄԱՇՕ

Բաց է հոգիս։ Ա՜խ, Գէորգ ջան, երբ պէտք է տեսնուենք դարձեալ։

ԳԷՈՐԳ

Կը տեսնուենք հոգիս, կը տեսնուենք։ Դէ, մնաս բարով... (Փաթաթվում են ու համբուրվում, այդ ժամանակ դուռը է գալիս Թալիկօն և տեսնելով նրանց, շփոթված աղաղակելով ետ այս այն կողմ է վազում, հետոյ ոչինչ չէ գտնում, ապա նկատելով սեղանի վրայ դրած հովհարը, վազում է վերցնում ու յարձակվում փոխադրուած գլխին և հենց ուզում է խփել, նրանք բաժանվում են միմեանցից ու վազում այս-այն անկիւնները, իսկ հովհարը ընկնում է յատակի վրայ։ Վազելու ժամանակ Գէորգը ընկնում է այն ընկերոջ՝ որի վրայ պառկած է Բաղդասարը և վայր ընկնում նրա վրայ, Բաղդասարը այդ աղաղակներից և վերջին դէպքից զարթնելով վեր է թռչում և աղաղակելով... „Պահա՜կ, պահա՜կ, օգնեցէ՜ք, զարթո՜ւ...» դուռը է վազում վերմակը վրան ծածկած։)

ԹԱԼԻԿՕ

(Գէորգի առաջը առնելով,) Դուն ով իս, ինչ բան ունիս իմ տանը, տօ շառլատան... հա՛, վուր վիկալնիմ կէտին ու շաղլամանէտ վեր բերիմ, հա՛... տօ պաժարնի...

ԳԷՈՐԳ

Մայրիկ, հանդարտուիր ու լսիր ինձ, ես պաժարնի չեմ և ոչ



էլ վատ մտքով եկած ձեր տուն։ (Ներս է վազում Բաղդասարը աղաղակելով։)

ԲԱՂԴԱՍԱՐ

Տօ գուղիր, ղարաուլ, բռնեցէք, բռնեցէ՛ք...

ԹԱԼԻԿՕ

Ի՞նչ գուղիր, Բաղդօ ջան, ուշկի արի։

ԲԱՂԴԱՍԱՐ

(Ապշած։) Բաս ինչ խաբար է...

ԹԱԼԻԿՕ

Էլ ինչ խաբար պիտի ըլի, գլխներուս կորուեցաւ ու աշխրքումը մէ մատը միղը դառանք... էս բէմուրազը, չիմ գիդի ով է, վուր գաղակիդէբա է էլի, տուն գամ տեսնիմ, ինչ տեսնիմ, փաթթվիլ ին, ու էս կապ կտրածը...

ԲԱՂԴԱՍԱՐ

Վա՜յ քու Բաղդօին... տեսնում իս... վունց աննամուս արած էլ կանգնած է... վայ մէ, վայ մէ... հիմի մէ թոփ ունենամ, Լրկուսի համա էլ չիմ խնայիլ։ (Գէորգին։) Տօ դուն ով իս...

ԳԷՈՐԳ

Հայրիկ, աղաչում եմ լսիր ինձ. ես օտար չեմ, ես ձեր փեսան եմ, ես վատ մտքով չեմ եկել ձեզ մօտ, թողէք խօսեմ և եթէ...

ԹԱԼԻԿՕ

(Բարկացած։) Վո՞ւնց թէ դուն միր փեսէն իս...

ԳԷՈՐԳ

(Բաղդասարին։) Այո, դուք ինձ ճանաչում էք. ես լաւ դիտաւորութեամբ եմ եկած, ոչ թէ ձեր պատիւը խայտառակելու...

ԲԱՂԴԱՍԱՐ

Ո՞վ իս վուրթի, ում վուրթին իս վուր էտէնց իս խօսում։

ԹԱԼԻԿՕ

Քա կունէմէն բռնէ դուս արա, ինչ իս հիդը ծանդր ու բարակ մասլահաթ անում։

ԳԷՈՐԳ

Մայրիկ...

ԲԱՂԴԱՍԱՐ

Մէ մուլափ ա՛յ կնիկ, դուս անիլը դժար չէ։

ԳԷՈՐԳ

Ես աւազակ կամ մարդասպան չեմ, մայրիկ, ինչու չէք կամենում լսել ինձ։

ԲԱՂԴԱՍԱՐ

Ասա՛, վուրթի, ո՛վ իս. ասկդ ու անումդ ի՛նչ է, եա ո՛ւմ վուրթին իս։

ԳԷՈՐԳ

Դուք իմ հօրը լաւ ճանաչում էք և կարծեմ խօսացել էք։ Դուք ցանկացել էք ինձ, ահա և ես եկել եմ։ Ես եմ Միխայիլ Պօղոսեանի որդին։

ԲԱՂԴԱՍԱՐ

(Ուրախ.) Միխէյլ Պօղոսովի տղէն... (Փաթաթւելով նրան։) Վա՜յ իս քու հոքուն մեռնիմ, փեսայ ջան. էտէնց ասա ու պրծնի է... հէր օխնած էլ ուր իս չարչրում ու լիղապատառ անում, կինաղամ դամբլութին էր գալի... (Թալիկօն ապշած նայում է այս տեսարանին, իսկ Մաշօն ստոպիկ ուրախ ժպտում է նրանց։) Ախր չէ՞ի ասում, վուր իմ ախչիկը էն թաւուր չէ...

ԹԱԼԻԿՕ

Քա՛, դուս արա՛ ինչ իս գժուի դուն էլ, անճանանչ օքմնու գլխիդ փեսայ իս շինո՛ւմ... (Մաշօին։) Կորի դէնը լպստած, դուն էլ գնում իս ու չեադ տղին իս կպչո՛ւմ... գնա կորի՛ էնթի օթախը, թէ չէ բանհոքի կանիմ։ (Բաղդասարին։) Ցիս քիզ ասում իմ դուս արա՛ ու ճորքս մի բիաբրու անի։

ԲԱՂԴԱՍԱՐ

Տօ տուտուց, թէ էտէնց էր, մէնակ ո՛ւր էիր թողնում ախչկադ, վուր էս փէսէս տուն է էկլի, բլքամ սա չէր, ուրիշն էր էլի...

ՄԱՇՕ

Հայրիկ ջան՝ ես հօ յիմար չէի, որ ուրիշին մեր տանը ներս բերէի. ես գիտէի որ իմ բաղդը դրանումն է կայանում։

ԹԱԼԻԿՕ

Ձէնդ կտրէ, լպստած։



ԳԷՈՐԳ

Մայրիկ, տեսնում էք, որ Աստուած կամենում է մեզ միացնել, մենք սիրում ենք միմեանց, ինչո՛ւ էք դուք հակառակում, մի՞թէ ես արժանի չեմ այդ բաղդին։ Վարքս վատ չէ, ունեմ լաւ պաշտօն, աստիճան և ռոճիկ. հարցրէք ո՛ւմը կամենաք։

ԲԱՂԴԱՍԱՐ

Ցիս հարցնիլ ինչ կօնիմ, վուրթի. քու մասին յիս լաւ իմ իմացի, ու քու հէրն էլ իմ լաւ համփսոն է... ու ... չունքի էտէնց սիրում իս վուրթի, ախչկաս, տալիս իմ քիզ, գնացէք վուրթի ու բախտավուրվեցէք, էրկուսդ էլ իմ վուրթիքն իք. (Թալիկօին։) Արի՛ ա կնիկ, արի՛, առաչ արի Մաշօ ջան։ (Գէորգին։) Անումդ ինչ է, փեսայ ջան։

ԳԷՈՐԳ

Անունս Գէորգ է, հայրիկ, ձեր ծառան։

ԲԱՂԴԱՍԱՐ

Ասծու ծառայ իս վուրթի, ու իմ սիրած փեսայ։ Էկէք...։ (Մաշօի և Գէորգի ձեռները միացնում է։)

ԹԱԼԻԿՕ

Քա ճանչնում ի՞ս, վուր նշնում իս։

ԲԱՂԴԱՍԱՐ

Տօ դուն արևէյն կաց, արի՛ օխնէ սրանց... վուր չիմ ճան չնում, ախչկաս խօմ դէն գցած չունիմ։ (Թալիկօն ժպտենում է նրանց.)

ԹԱԼԻԿՕ

(Առանձին։) Չէ՛, լա՛ւ տղայ է էրևում... (Նրանց։) Խիստ լաւ, վուրթիք ջան, յիս էլ տալիս իմ իմ համաձայնութինը, խօլօթ, էնէնց արէք վուր էլախտվայ պէս գիդնին չ՚փռվիմ... հա՜...

ՄԱՇՕ և ԳԷՈՐԳ

(Թալիկօի առաջ չոքելով։) Ներիր մեզ, մայրիկ ջան, ներիր։

ԹԱԼԻԿՕ

Բախշում իմ, վիկացէք, Աստուած բախտավուրացնէ։ (Նրանք վէր են կենում։)

ԲԱՂԴԱՍԱՐ

Մամա Աբրամի օխնութինը ըլի ձիգ վրայ վուրթիք, ծլիք ու ծախկիք, մէկսմէկու հնազանդ ըլիք ու սիրով, մէ բարձի ծիրանաք... ու...

ԳԷՈՐԳ

(Ընդմիջելով իր խօսքերը, աղաղակում է։) Վա՜յ... վա՜յ... հայրիկ, պաժա՜ր... պաժա՜ր... հեռացէ՛ք, պաժա՜ր... (Բաղդասարն ու Թագուհին շփոթուած վազում են դէպի անկիւնները։ Գէորգին ու Մարօն նայելով նրանց Բարձրաձայն ծիծաղում են։)

ՎԱՐԱԳՈՅՐ

Հ. Հ. ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
С.С.Р.А. Публичная Библиотека
7/XI 1922
имени А. Мясникяна
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

# ԳՐԱՎԱՃԱՌԱՆՈՑ

ԵՒ

ԼՐԱԳՐԱԿԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆ

**ԲԱՐՍԵՂ ՔԱՄԱԼԵԱՆԻ**

*Թիֆլիս, Գոլովինսկի պրոսպեկտ, իշխան Մուխրանսկու տանը, Թիֆլիսի ժողովարանի տակ.*

—

Վաճառվում են ամեն տեսակ գրքեր։

Նոյնպէս վաճառվում են ամեն տեսակ պատկերներ Հայ նշանաւոր գործիչների, յայտնի դերասանների և դերասանուհիների, ի միջի այլոց Վեհափառ Կաթողիկոս Մկրտիչ Ա. Խրիմեան Հայրիկի ամենարնտիր լուսանկարներ (թւով մօտ 15 տեսակ), նոյնպէս և վիմագիր երեք տեսակ. Հայրիկի պատկերները 5 կոպէկից մինչև 3 րուբլի։ Կան նաև Գրիգոր Արծրունու, Ռաֆֆիի, Ադամեանի, Ներսէս Պատրիարքի, Ռափայէլ Պատկանեանի, Խաչատուր Աբովեանի, տիկին Հրաչեայի, Աստղիկի և Սիրանոյշի, Ադամեան դերերում, Գարաքաշեան քոյրերի, Հայաստանի փառքը և ուրիշ շատ պատկերներ։ Գումարով առնողներին որոշ զիջումն կլինի։ Օտարաքաղաքացիների պահանջները կատարվում են արագ և ճիշտ։ Վաճառվում են նոյնպէս ամեն տեսակ լրագիրներ — տեղական և Ռուսաստանի։

*Մեր հասցէն*

Тифлисъ: Книжно-Газетное Агентство Василія Маркаровича Камалянъ. Головинскій проспектъ, подъ Тифлис. Собраніемъ.

## ԲԱՐՍԵՂ ՔԱՄԱԼԵԱՆԻ

*Հետեւեալ հրատարակութիւնները վաճառւում են բացառապէս իր գրավաճառանոցում, Գոլովինսկի պրոսպեկտ, իշխան Մուխրանսկու տանը, Թիֆլիսի ժողովարանի տակ:*

ԳԻՆՆ Է.

1. Երեք քաջեր, կոմեդիա 1 արարուածով, (սակաւաթիւ.) . . 20 կ.
2. Այ քեզ օյին, վօդևիլ 1 արարուածով 20 »
3. Էլիզայի վիշտը, վէպիկ . . 10 »
4. Իմմանուէլ Պանիի թաղումն. . 5 »
5. Համլէտ. ողբերգութիւն 5 արարուածով. . . . . 60 »
6. Աննա Սարոյեան, էտիւդ . . 30 »
7. Սիրահարը սեղանի տակ, վօդևիլ 1 արարուածով . , . 20 »

---

*Շուտով կը տպագրուի հրատարակչի միւս հեղինակութիւնը՝*

„ԷՏ ԷՐ ՊԱԿԱՍ կամ ԾԵՐԵՐԻ ԳԱՆԳԱՏԸ“

Ֆարս—վօդևիլ 1 արարուածով:

---

ԳԻՆՆ Է 20 ԿՈՊԷԿ.

550

0014763

2013

ՀՀ Ազգային գրադարան
NL0014763